ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
Երկրաբանություն և աշխարհագրություն 55(3), 2021 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 331.3001

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ

Ա. Ռ. ԱՎԱԳՅԱՆ *

ԵՊՀ սերվիսի ամբիոն, Հայաստան

Մեծ է զբոսաշրջության դերը մարդկանց հանգստի կազմակերպման, միջմշակութային հաղորդակցության ընդլայնման, նոր աշխատատեղերի ստեղծման, սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման, էկոլոգիական խնդիրների լուծման և ընդհանրապես մարդկային կայուն զարգացման ապահովման գործում: Զբոսաշրջությունն արտարժույթի ներհոսքի հիմնական աղբյուրներից մեկն է: Զբոսաշրջության շարունակական զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ գիտականորեն հաստատված կայուն աշխարհայացք և դրա հիման վրա կառուցել զբոսաշրջության ողջ համակարգը: Ուստի, զբոսաշրջության աշխարհայացքի ամբողջական վերլուծությունը, սկզբունքների գիտական հիմնավորումը, ակնկալվող արդյունքների կանխատեսումն արդիական են և ունեն գործնական նշանակություն: Խնդիրը լուծելու համար զբոսաշրջության հայեցակարգը ձևակերպելիս նախապատվությունը տրվում է քաղաքական, բարոյական, գեղագիտական և գիտական հասկացություններին և փիլիսոփայական դրույթներին, որոնք միավորում են դրանք մեկ ընդհանուր հիմքի մեջ, ինչպես նաև կայուն զբոսաշրջության գաղափարին, որը ձևավորվում է այս դրույթների հիման վրա և կազմակերպվում: Զբոսաշրջության ոլորտի բաղադրիչներն իրենց հիերարխիկ համակարգով կազմում են մի ամբողջություն, որը գործում է որպես կենդանի օրգանիզմ՝ գիտականորեն հիմնավորված սկզբունքներով: Ներգնա զբոսաշրջության գործունեության համար շատ կարևոր է պետական քաղաքականությունը, ազգային բարոյական նորմերի հիման վրա ձևավորված մարդկանց մտածելակերպը: Զբոսաշրջության աշխարհայացքի ձևավորման գործում բացառիկ դեր են խաղում բարոյականության և գեղագիտության նորմերը, դրանց հիման վրա ձևավորված մտածելակերպը, հարաբերությունները, դրանց բավարարման կարիքներն ու կառուցվածքները և մատչելիությունը: Ավելին, էթիկայի և գեղագիտության կողմից մշակված սկզբունքների և մոտեցումների դերը շատ արագ աճելու միտում ունի: Իսկ ընդհանրապես զբոսաշրջությունը ստանում է ավելի բարոյական, գեղագիտական կամ ընդհանրացված՝ հումանիստական բովանդակություն: Համամարդկային արժեքներով օժտված հումանիզմը գերազանցում է պետական սահմանները, համագործակցության ընդհանուր դաշտ է բերում ազգային, էթնիկ, մշակութային տարբերությունները, օգնում է նրանց միջև ընդհանուր լեզու գտնել, որն օգնում է հաղթահարել օտարերկրացիների կարծրատիպերն ու ավանդույթները, արժեքները, սովորույթները: հակասություններ ստեղծելու փոխարեն ապահովել զբոսաշրջության զարգացումը. Զբոսաշրջության աշխարհայացքը զարգացման որոշակի մակարդակում հիմք է հանդիսանում կայուն զբոսաշրջության զարգացման համար:

https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.3.210

***Keywords*:** tourism, worldview of tourism, sustainable tourism.

* E-mail: avagyan@ysu.am

Ներածություն: Զբոսաշրջությունը հասարակական կյանքի կարևոր ոլորտներից, արտաժույթի ներհոսքի կարևոր միջոցներից մեկն է:

Զբոսաշրջության շարունակական զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ գիտականորեն հիմնավորված կայուն աշխարհայացք և նրա հենքի վրա կառուցել զբոսաշրջության ողջ համակարգը: Ուստի, զբոսաշրջության աշխարհայացքի ամբողջական վերլուծությունը, սկզբունքների ու մոտեցումների գիտական հիմնավորումը, սպասվելիք արդյունքների կանխանշումն արդիական է և ունի կիրառական նշանակություն:

Հետազոտության մեթոդիկան: Օգտագործված են Է. Ալաևի, Բ. Խորևի, Վ. Բոկովի, Ռ. Մորրիլի, Էդ. Տեյֆի և ուրիշ աշխարհագետների կողմից առաջարկվող տարածականության, համակարգային, որոշակիության և այլ մեթոդներ [1]:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը: Զբոսաշրջությունն անձի կողմից ընտրված, հասարակության կողմից ճանաչված, պետության կողմից հաստատված ապրելաձև է՝ կենսակերպ, ուր մեկ ընդհանրության նպատակի են ուղղորդվում մարդու ապրելու փիլիսոփայական դրույթները, մտածողությունը, սկզբունքները: Իր մտածողությամբ, տրամաբանությամբ և ընտրովի սկզբունքների կիրառմամբ մարդը կառուցում է իր տունը:

Ըստ Դ. Հարվեի՝ «տան բովանդակությունն անձի աշխարհագրական երևակայությունն է, տարածքային գիտակցությունը, որը մարդուն մղում է գնալ, տեսնել հարևան տները, նրանց հետ կարգավորել իր փոխհարաբերությունները» [2]: Գնալու և տեսնելու, լավը վերցնելու ցանկությունն էլ զբոսաշրջության դրդապատճառներից մեկն է: Տեսնելով ու ընկալելով «ուրիշի տունը»՝ մարդն ավելի է հարստացնում իր գիտելիքները, տան բովանդակությունը, զարգացնում կառուցելու հմտությունները, ընդլայնում աշխարհայացքը, որոնք իրենց հերթին հենվում են գիտական, քաղաքական, բարոյագիտական և գեղագիտական հայեցակարգերի վրա:

Գիտական հայեցակարգի տիրույթում ձևավորվող զբոսաշրջությունը իրատեսական է, կառուցողական: Զբոսաշրջության գործունեությունը, նրա առանձին բաղադրիչների բովանդակությունը, դերն ու նշանակությունը գիտականորեն հիմնավորված են, միմյանց հետ գտնվում են տրամաբանական փոխկապակցությունների մեջ: Զբոսաշրջության ոլորտի բոլոր բաղադրիչներն իրենց հիերարխիկ համակարգով, կազմում են մեկ ընդհանրություն, որը որպես կենդանի օրգանիզմ աշխատում է համընդհանուր փիլիսոփայական և ներքին՝ իրեն ոլորտի համար ավելի կարևոր գիտականորեն հիմնավորված սկզբունքներով և մոտեցումներով:

Գիտակցությունը մի կողմից մեծացնում է զբոսաշրջիկների քանակը, մյուս կողմից, օգնում է ոլորտի կազմակերպումը դնել ավելի կայուն մակարդակի վրա: Զբոսաշրջության կառույցի իրական պատկերի ստացման գործում կարևոր դեր են կատարում քաղաքական հայեցակարգի սկզբունքները, մոտեցումները՝ նրանց վրա ձևավորված քաղաքական դաշտը:

Հասարակական զարգացման օրենքների իմացությունն օգնում է վարել զբոսաշրջային գործունեության գիտականորեն հիմնավորված քաղաքականություն, որը վերաբերվում է ինչպես հասարակական խմբերի, ազգերի, այնպես էլ պետությունների, հարաբերություններին, գործողություններին, որոնք կարգավորվում են իշխանության շնորհիվ:

Ներքին քաղաքականության մեջ կարևոր նշանակություն ունեն տնտեսական, սոցիալ-տնտեսական, բնապահպանական օրենքները, հարաբերությունները: Արտաքին քաղաքականության մեջ կարևորվում են հարևան պետությունների հետ հարաբերությունները, սահմանների մատչելիությունը, քաղաքաաշխարհագրական, տնտեսաաշխարհագրական դիրքը:

Ներգնա զբոսաշրջության գործունեության համար շատ կարևոր է պետական քաղաքականության, ազգային բարոյական նորմերի վրա ձևավորված ժողովրդի մենտալիտետը՝ հյուրընկալության համակարգը:

Զբոսաշրջության աշխարահայացքի ձևավորման գործում բացառիկ դեր են կատարում բարոյագիտության և գեղագիտության չափանիշները, նրանց բազայի վրա ձևավորված մտածելակերպը, հարաբերությունները, պահանջմունքները, դրանց բավարարման կառույցները և նրանց մատչելիությանը: Ընդ որում բարոյագիտության և գեղագիտության կողմից մշակված սկզբունքների մոտեցումների դերն ունի շատ արագ ծավալվելու միտում: Եվ ընդհանրապես զբոսաշրջությունը որքան հեռու, այնքան ավելի է ստանում բարոյական, գեղագիտական բովանդակություն: Հարստանում հումանիստական գաղափարներով: Հումանիզմն օժտված լինելով համամարդկային արժեքներով հաղթահարում է պետական, սահմանները մեկ ընդհանուր համագործակցության դաշտ է բերում ազգային, էթնիկական, մշակութային տարբերությունները, օգնում է գտնելու նրանց միջև ընդհանուր եզրեր: Այն հակասությունների փոխարեն օգնում է հաղթահարելու կարծրատիպերը և օտարների ավանդույթները, սովորույթները դարձնել զբոսաշրջության զարգացման կարևոր գրավչության:

Զբոսաշրջային տնտեսությունը ձևավորվում է որոշակի հասարակական բարոյական դաշտում, բարոյական չափանիշների հենքի վրա: Չափանիշներ, որոնցում հասարակության իդեալներն են, հոգևոր հոգեբանական արժեքները:

Հոգևոր և հոգեբանական արժեքներն առանձնակի դրսևորում են ստանում զբոսաշրջության, հատկապես մշակութային զբոսաշրջության ժամանակ և, ինչպես գրում է Վ.Ա. Կվարտալնովը, «մարդն այցելության միջոցով յուրացնում է աշխարհի մշակույթը» [3]: Զբոսաշրջության ժամանակ նաև մասնակիցների փոխհարաբերություններն են, միմյանց օգնելու անհրաժեշտությունը, հոգեկան, բարոյական, հայրենասիրական դաստիարակությունը [4]:

Զբոսաշրջության ընթացքում հոգեբանական երևույթները հնարավորություն են տալիս գիտակցական ձևով ճիշտ ընտրել միջանձնային հարաբերությունները [5]:

Զբոսաշրջությունը մարդու ֆիզիկական և հոգեբանական ուժերի վերականգնումն է, գիտելիքների ձեռք բերումը, ստեղծագործելու հնարավորությունը [6]:

Այս գործոններից ծնվում է զբոսաշրջիկի վարքը, ճանապարհ ընկնելու ցանկությունը, ընդհանրական ձևով ասած՝ զբոսաշրջության դրդապատճառը՝ շարժիչ ուժը:

Ըստ Ա. Ավագյանի՝ «զբոսաշրջության համակարգում կարևոր դեր է կատարում մարդու վարքի հումանիզացման մակարդակը՝ համամարդկային արժեքներով զինվածությունը» [7]:

Վարքը, վերաբերմունքն են որոշում զբոսաշրջության ձևավորման

սկզբունքները և մոտեցումները, համոզմունքները: Համոզմունքների հաստատությունից ձևավորվում է կայուն զբոսաշրջային գաղափարախոսությունը, որի դաշտում միավորվում են աշխարհայացքը և զգացմունքները: Հաստատուն զգացմունք ունեցող անձը դառնում է կայուն զբոսաշրջության կազմակերպիչ, իսկ զբոսաշրջության կայունությունը՝ գրավիչ գործոն:

Բարոյական հոգևոր, հոգեբանական մտածելակերպի մթնոլորտում ձևավորվում են գեղագիտական հայացքները՝ գեղեցիկը տեսնելու զգալու հատկությունները: Ըստ Պլատոնի գեղեցիկը ոչ այլ է, եթե ոչ բացարձակ, հավերժական ու անփոփոխ, վերզգայական գաղափար է:

Գեղեցիկի տեսնելու համար անձը պետք է ունենա արվեստագետի հոգի, հոգեկան ու հոգևոր մեծ կարողություն: Գեղեցիկը տեսնելու կարողությունը զբոսաշրջության զարգացման ամենամեծ գործոններից մեկն է:

Գեղեցիկի զգացումը մարդուն դարձնում է ավելի բարոյական, կտրում նյութական աշխարհից, օգնում ավելի հեշտ տանելու կյանքի դժվարությունները, նրանց հաղթահարելու միջոցներից մեկը համարելով բնության մեջ մեկուսանալը, բնականի, տիեզերականի հետ հաղորդակցվելը:

Զբոսաշրջության ձևի ընտրությունը կամ զբոսաշրջային համակարգի ստեղծումն անմիջական կապ ունի անհատի մշակույթի, մտավոր կարողությունների հավատի հումանիզացման մակարդակի հետ կամ, ընդհանրացված ձևով ասած, մարդկային կապիտալի հետ, որը զբոսաշրջության համակարգի կայուն գոյության և գործունեության գլխավոր գրավականն է:

Ինչպես նշում է Ա.Ռ. Ալավերդովը. «շուկայական տնտեսության տնտեսավարող յուրաքանչյուր սուբյեկտի ռազմավարության առաջնային նպատակն է ամրացնել մրցակցային դիրքը: Գործնականում այդ նպատակին հասնելը կախված է բազմաթիվ գործոններից, որոնցից մեկը մարդկային կապիտալն է» [8]:

Զբոսաշրջությունն իր ձևավորման պատմությամբ, տարածքային ընդգրկվածությամբ, հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները թափանցելու ունակությամբ բարդ համակարգ է: Համակարգ, որը ձևավորվել է առաջին հերթին մարդու ապրելու մտածելակերպի՝ փիլսոփայության դաշտում:

Զբոսաշրջությունն ամիջական կապ ունի մարդու գիտակցության, ապրելու փիլիսոփայության հետ: Գիտակցությունը որոշակի մակարդակ է, մարդուն տեղից է շարժում, մղում գնալու, տեսնելու: Գիտակցությունը զբոսաշրջության գեներատորն է:

Եզրակացություն: Ըստ վերոհիշյալի.

1. զբոսաշրջության աշխարհայացքը փիլիսոփայական կատեգորիա է, որը ձևավորվում է քաղաքագիտության, բարոյագիտության, գեղագիտության չափանիշների և գիտական հայեցակարգի տիրույթում,
2. զբոսաշրջության աշխարհայացքը զարգացման որոշակի մակարդակում հիմք է հանդիսանում կայուն զբոսաշրջության ձևավորման համար,
3. վերջնարդյունքում մարդկային կապիտալն է որոշում զբոսաշրջության ձևը, գործունեությունը, որակը, ոլորտի կառուցվածքը և հումանիզացման մակարդակը:

Ստացվել է՝ 28.09.2021
Գրախոսվել է՝ 08.12.2021
Հաստատվել է՝ 16.12.2021

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դեմկո Զ., Աննենկով Վ. *Աշխարհագրություն, արվեստն ու գիտությունը* (թարգմանիչ Կ. Ալեքսանյան): Երևան (2007), 90 էջ:
2. Хорвей Д. *Социальная справедливость и город*. Москва, Новое литературное обозрение (2018), 440 с.
3. Квартальнов В.А. Культура и туризм вместе. *Теория и практика физической культуры*, **4** (2000).
4. Линтовский Э.Э., Федотов Ю.Н. *Топология и психология туризма.* Москва, Советский спорт (2008), 3 с.
5. *Психология делового общения в туризме и гостеприимстве* (под ред. Е.С. Сахарчук). Москва, Федеральное агенство по туризму (2014), 11 с.
6. *Теория и методика туризма*. (Под ред. В. А. Таймазова). Москва, Советский спорт (2014), 31 с.
7. Ավագյան Ա.Ռ. Մարդու վարքի դերը սերվիսի կազմակերպման եվ կառավարման մեջ: *ԵՊՀ Գիտական տեղեկագիր: Երկրաբանություն և աշխարհագրություն* **54** (2020), 66–72: https://doi.org/10.46991/PYSU:C/2020.54.1.066
8. Алавердов А.Р. Управление человеческими ресурсами организации. Москва, Университет Синергия (2017), 9 с.

А. Р. АВАКЯН

МИРОВОЗЗРЕНИЕ ТУРИЗМА

Резюме

Роль туризма велика в организации отдыха людей, расширении культурного общения, создании новых рабочих мест, улучшении социально-экономических условий, решении экологических проблем и в обеспечении устойчивого человеческого развития. Туризм – один из основных источников притока иностранной валюты. Чтобы обеспечить непрерывное развитие туризма, необходимо иметь научно подтвержденное устойчивое мировоззрение и строить на его основе всю туристическую систему. Поэтому полный анализ мировоззрения туризма, научное обоснование принципов и подходов, прогноз ожидаемых результатов актуален и имеет практическое значение. Для решения проблемы при формулировании концепции туризма предпочтение отдается политическим, моральным, эстетическим и научным концепциям и положениям философии, а также идее устойчивого туризма, который сформирован на основе этих положений и организован с учетом качественных особенностей человеческого капитала. Туризм, сформированный в области научной концепции, реалистичен и конструктивен. Компоненты сферы туризма с их иерархической системой образуют единое целое, которое работает как живой организм с научно обоснованными принципами и подходами.

Менталитет людей, сформированный на основе государственной политики, национальных моральных норм (как система гостеприимства), очень важен для въездного туризма. Нормы морали и эстетики, образ мышления, сформированный на их основе, отношения, потребности и структуры их удовлетворения, а также доступность играют исключительную роль в формировании мировоззрения туризма. Более того, роль принципов и подходов,

разработанных этикой и эстетикой, имеет тенденцию очень быстро расти. Туризм приобретает более нравственное, эстетическое или обобщенно-гуманистическое содержание. Гуманизм, наделенный общечеловеческими ценностями, выходит за рамки государственных границ, объединяет национальные, этнические, культурные различия в общую область сотрудничества, помогает найти точки соприкосновения между ними, что помогает преодолевать стереотипы и традиции, делает важным развитие туризма вместо создания противоречий. Мировоззрение туризма на определенном уровне развития является основой развития устойчивого туризма.

A. R. AVAGYAN

WORLDVIEW OF TOURISM

Summary

Tourism is an important field of social life in terms of organizing people's recreation, expanding cultural communication, creating workplaces, improving socio-economic conditions, solving ecological problems and ensuring sustainable human development. Tourism is one of the major sources of foreign currency inflows. In order to ensure the continuous development of tourism, it is necessary to have a scientifically approved sustainable worldview and build the tourism system on its basis. Therefore, the complete analysis of the worldview of tourism, the scientific substantiation of the principles and approaches, the prediction of expected results is actual and has practical significance. In order to solve the problem, in the formulation of the tourism concept preference is given to political, moral, aesthetic and scientific concepts and to the provisions of philosophy, as well as the idea of sustainable tourism, which is formed on the basis of these provisions. The components of tourism form a whole working as a living organism on scientifically based principles.

The mentality of people formed on the basis of state policy and national moral norms are important for inbound tourism. The norms of morality and aesthetics, the way of thinking formed on their basis, the relations, the needs and the their satisfaction play an exceptional role in shaping the worldview of tourism. The role of principles developed by ethics and aesthetics has a tendency to grow very fast. And in general, tourism gets more moral, aesthetic and humanistic content. Humanism, endowed with universal values, transcends state borders, brings national, ethnic, cultural differences into a common field of cooperation, helps to find common ground between them, which helps to overcome stereotypes and traditions, makes an important attraction for the development of tourism instead of creating contradictions. The worldview of tourism at a certain level of development is the basis for sustainable tourism development.